

Սարից Սար...

Հայոց Աշխարհը փոքր է եւ անձայր
թէ տարածքի մէջ
թէ ժամանակի
այնտեղ ամէն մէկ դէպք, պահ եւ/կամ վայր
ամբողջութիւն է
բայց դեռ մասնակի

Ամարասի մուգ խորքը քարերուն
Վարագայ Վանքի լոյսն է երերուն
որ կը պլպլայ, սուրբ, աւետաւոր
միեւնոյն մոմի շունչով յաւէտ նոր

Դաշտային Արցա՞խ՝ Մշոյ դաշտ, էլի
երկուքն ալ նոյնպէս, նոյնքան պաշտելի
իսկ արդէն ամբողջ Արցախը ինքնին
Սասուն է անհուն
Սասուն նոր ու հին

Այստեղ՝

Ապարան

Ադտամ

Աւարայր

նոյն պատերազմն է
նոյն հողին համար
Սարդարապատը՝ Գետաշէն անգին
(բայց լրացած չէ էջն այդ տակաւին...)

Իսկ այդտեղ

հեռուն

Մոաւ լերան մօտ

ուր արելը միշտ լուրջ է, մտածկոտ
երբ որ օրն ըլլայ տարուան Մայիս Ին
կ'երեւայ շուքը Սիս ու Մասիսին

Հայրուկ Շամլեան

«Շ», 2013